

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ (5-6-րդ դասարաններ)

Թ. Կ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դասախոս

Միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում սովորողների բանավոր խոսքի զարգացման հարցին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է ճշտել, թե այդ տարիքի դպրոցականը հոգեբանամանկավարժական ինչ առանձնահատկություններ ունի, և խոսքի ուսուցման գործընթացը կազմակերպելիս որպես ելակետ ունենալ վաղ դեռահասության տարիքին բնորոշ կողմերը: 10-12 տարեկան դեռահասներին հիմնականում հատուկ են հետևյալ ընդհանրական բնորոշումները (6).

Ա/ Ճանաչողության բուռն ծգտում, իմանալու, սովորելու ինքնուրույն ճիգեր: Դեռահասին հրապուրում են դասի ընթացքում և դասից դուրս ինքնուրույնություն դրսևորելու հնարավորությունը, ճանաչողական գործունեության ծավալումը: Սակայն դեռահասը, տոգորված լինելով ճանաչելու, իմանալու բուռն ծգտումով, չի տիրապետում ուսումնական գործունեության կազմակերպման եղանակներին: Ուսուցչի խնդիրն է դեռահասին սովորեցնել ուսումնառության նոր եղանակներ ու ձևեր և, ամենակարևորը, թույլ չտալ, որ ուսման նկատմամբ հետաքրքրությունը հանգչի: Հետազոտական գործունեությունը դեռահասին մեծ բավականություն է պատճառում: Նա ուզում է ինքնուրույնաբար հասնել ինչ-որ բանի, գյուտեր և բացահայտումներ անել: Ընդ որում՝ նրա համար հավասարապես կարևոր են ինչպես ուսումնական նյութի բովանդակությունը, այնպես էլ այդ նյութից գիտելիք քաղելու գործընթացը, միջոցները, եղանակները, մեթոդները:

Բ/ Վառ երևակայության դրսևորում: Այս տարիքում էական տեղաշարժ է կատարվում երևակայության ոլորտում: Դեռևս տարրական դպրոցում ձևավորված և անընդհատ զարգացող վերացական մտածողության ազդեցությամբ դեռահասը երևակայության միջոցով փորձում է ընդգրկել անընդգրկելին:

Գ/ Ինքն իրեն ճանաչելու, իր մասին խոսելու բուռն ցանկություն: Սեփական անձը դառնում է դիտարկման և զննության առարկա: Դեռահասը փորձում է ճանաչել և հասկանալ ինքն իրեն:

Դ/ Մարդկանց հասկանալու, ճանաչելու անհագ ցանկություն: Ինքն իրեն ճանաչելուն զուգընթաց դեռահասի համար կարևոր է ընդհանրապես մարդկանց ճանաչելու և հասկանալու, ավելին՝ մեծերի աշխարհի մուտք գործելու ցանկությունը:

Ե/ Ընկերների հետ համագործակցելու, շփվելու ցանկություն: Քանի որ մեծերի աշխարհը դեռևս փակ է նրա համար, այդ պատճառով էլ դեռահասի համար ամենակարևորը դառնում է ընկերների հետ հաղորդակցվելու ուրախությունը, գործում է անդավաճան ընկերության և հասկացված լինելու սկզբունքը: Իսկ անհատականության ձևավորման հիմքը հաղորդակցական գործունեության ծավալումն է, որի ընթացքում ձևավորվում է անձի ինքնաճանաչողությունը, ինչպես նաև մտածողության առանձնահատկությունը: Ուսումնական գործունեության մեջ ամենակարևորը դառնում է հաղորդակցման և շփման բուռն ցանկության

բավարարումը: Իսկ հաղորդակցական կարողությունների զարգացումը վաղվա քաղաքացու նկարագրի ամենաբնորոշ, կենսականորեն անհրաժեշտ գծերից մեկն է:

Հիմա տեսնենք, թե դեռահասին բնորոշ այս կողմերը ելակետ ունենալով՝ ինչպես կարելի է կառուցել բանավոր խոսքի զարգացման աշխատանքները:

Ինքնուրույնաբար ճանաչողության հասնելու ձգտումը բավարարելու համար ուսուցիչը պիտի փորձի ուսումնական գործը այնպես կազմակերպել, որ սովորողն ինքն աշխատի, հետազոտի, հասնի որոշակի հետևության, դրանից հետո էլ հանդես գա ընկերների առջև և ներկայացնի իր «գյուտերը» և «հայտնագործությունները»: Այսինքն՝ սովորողին արտահայտվելու, խոսելու հնարավորություն է տրվում՝ մինևույն ժամանակ դրսևորելով ընդգծված հարգանք նրա կարծիքի, մտքերի, ընդհանրապես նրա անձի հանդեպ:

Պիտի նշել նաև, որ սովորողի խոսքի զարգացումը միայն մայրենի լեզվի ուսուցչի խնդիրը չէ. այս հարցը պիտի մտահոգի ուսումնական ցանկացած առարկա դասավանդողի: Հետևաբար սույն հոդվածում օրինակները մայրենի լեզվի դասավանդումից բերելով հանդերձ՝ փորձելու ենք ներկայացնել տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կարող են կիրառվել ցանկացած առարկայի ուսումնասիրության գործընթացում՝ սովորողների բանավոր խոսքի զարգացման նկատառումով:

Դեռահասի ճանաչողության ձգտումը և բանավոր խոսքի զարգացումը խթանելու համար կարելի է կիրառել որոշակի տեխնոլոգիաներ և մեթոդներ: Տեխնոլոգիաներից հատկապես պիտի նշել **պրոբլեմային, մոդուլային, համագործակցային, խաղային** ուսուցման տեխնոլոգիաները (7, էջ 317-340): Պրոբլեմային տեխնոլոգիայի կիրառության ժամանակ ուսուցիչը պիտի ձևակերպի որևէ հիմնահարց, որի լուծումը պիտի վստահի սովորողներին: Սկզբնական շրջանում ուսուցիչը ինքն է լուծում պրոբլեմը՝ սովորողների գործուն մասնակցությամբ, իսկ հետո արդեն առաջարկվող հիմնահարցերի լուծումները պիտի գտնեն սովորողները՝ ինքնուրույնաբար կամ խմբով աշխատելով: Այս դեպքում սովորողը ճանաչողության է հասնում հետազոտական-որոնողական գործունեություն ծավալելու արդյունքում, իսկ հետո էլ իր «գյուտերը» բանավոր խոսքով ներկայացնում է դասարանի ուշադրությանը:

5-6-րդ դասարաններում մայրենի լեզվից կարելի է հիմնահարցեր ձևակերպել ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունների, տեքստի ենթիմաստի բացահայտման, բառերի արտասանության և գրության, դրանց իմաստների, կազմության, ծագման բացահայտման ուղղությամբ: Օրինակ՝

- Կարելի՞ է պնդել, թե տրված ստեղծագործությունը հեքիաթ (առակ, բանաստեղծություն, պատմվածք) է:

- Արդյոք **դուռ, դուրս, դրկից, դրացի, դրանիկ** բառերը նույն արմատն ունեն:

- Որևէ ընդհանրություն կա՞ **հավկիթ, կթել, այգեկուծ, կթոց** բառերի միջև:

- Կարո՞ղ եք ապացուցել, որ տրված արտահայտությունները փոխաբերություններ (մակդիրներ, համեմատություններ) են:

Մոդուլային տեխնոլոգիայի կիրառությունը նախատեսում է, որ սովորողին տրամադրվեն անցնելիք տեսական նյութը, դրան կից համապատասխան վար-

ժություններ և առաջադրանքներ: Սովորողն աշխատում է ինքնուրույն, յուրացնում է տեսական նյութը, կատարում տրված առաջադրանքները, ապա իր կատարածը ներկայացնում ընկերների ուշադրությանը:

Համագործակցային տեխնոլոգիայի կիրառության դեպքում սովորողները խմբով են աշխատում, որոնում հիմնախնդրի պատասխանը, ապա բանավոր խոսքով հանդես գալիս դասընկերների առջև:

Խաղային տեխնոլոգիայի կիրառության դեպքում դիդակտիկական, դերային խաղերի միջոցով յուրացվում, ամրապնդվում է անցած նյութը, զարգանում են սովորողների համագործակցային, հաղորդակցական կարողությունները, ինչպես նաև մարզվում են նրանց ուշադրությունը, դիտողականությունը և տրամաբանական մտածողությունը:

Խաղային տեխնոլոգիայի կիրառությամբ կարելի է ամրապնդել անցած բառերի յուրացումը և ստուգումը: Դեռահասները հատկապես սիրում են խաղմրցույթները, երբ կազմում են թիմ և մրցում են որոշակի առաջադրանքների շուրջ (4, էջ 56-58):

Հատուկ անդրադարձ պիտի կատարել դերային խաղերի կազմակերպմանը, որոնք այս տարիքին բնորոշ մի քանի հարցեր են լուծում (2): Ստանձնելով որևէ դեր՝ դեռահասն ինքն իր աչքում մեծահասակ է դառնում. սա նրա երազանքն է. շուտ մեծանալ և մուտք գործել մեծահասակների աշխարհ: Դերային խաղերով կարելի է հարստացնել սովորողների բառապաշարը, զարգացնել երկխոսություն և մենախոսություն կառուցելու կարողությունները: Իսկ որ ամենակարևորն է, դերային խաղերը ապահովում են սովորողի դրական վերաբերմունքն իր արած գործի հանդեպ, միևնույն ժամանակ ազատ և անկաշկանդ խոսելու հնարավորություն են տալիս (5, էջ 84): Դերային խաղեր կարելի է կազմակերպել հետևյալ թեմաներով՝

Խանութում

Վարսավիրանոցում

Ատամնաբուժարանում

Գրախանութում

Գրադարանում

Թանգարանում

Տուն-թանգարանում

Կենդանաբանական այգում

Սրճարանում

Հեռուստատեսային հաղորդման ժամանակ

Այսօրինակ դերային խաղեր անցկացնելու համար ուսուցիչը և աշակերտները պիտի հավասարապես աշխատեն և պատրաստվեն դասին (1, էջ 112): Օրինակ՝ եթե «Սրճարանում» դերային խաղն է անցկացվելու, ապա նախօրոք պիտի պատրաստել ճաշացանկի գրքույկներ, նշել ուտեստների, թխվածքի, ըմպելիքի անունները, դրանք հակիրճ նկարագրել: Իսկ դասարանում՝ համապատասխան միջավայր ստեղծել և խաղալ: Նախօրոք ամբողջ դասարանով պիտի մշակել նաև խաղի կանոնները՝ քաղաքավարի պահվածք, բարեկիրթ խոսք, աղջիկների հանդեպ ընդգծված ուշադրություն և այլն:

Շատ հետաքրքիր են նաև որևէ գրողի (հատկապես այն գրողի, որի ստեղծա-

գործությունն ուսումնասիրում են այդ ժամանակահատվածում) «Տուն-թանգարանում» դերային խաղի կազմակերպումը: Այս խաղի անցկացման համար աշակերտները ուսուցչի հետ հավասար պատրաստվում են, գտնում են լուսանկարներ, նյութեր, փաստաթղթեր, էլեկտրոնային և տպագիր գրքեր կամ սովորողներն իրենք են պատրաստում գրքույկներ և այլն: Ապա ընտրվում են «թանգարանավարներ», որոնք պիտի պատմեն գրողի կյանքի, նրա գործունեության մասին, պիտի պատասխանեն «այցելուների» հարցերին:

Հասկանալի է, որ այսպիսի դերային խաղերի անցկացման ժամանակ կարող են լինել հանպատրաստից և հետաքրքիր դրվագներ, հաճելի երկխոսություններ, սովորողների երևակայության անակնկալ դրսևորումներ և այլն: Ուսուցիչը ևս պիտի մասնակցի այսպիսի խաղերին՝ իրեն վերապահելով խաղացողի դեր՝ խրախուսելով սովորողների մտքի թռիչքները:

Դերային խաղերը կարող են նաև համապատասխան միջավայրում անցկացվել և առավել իրական բնույթ կրել, եթե դպրոցում հնարավորություն կա, ասենք, հաց թխելու, թխվածք, որևէ ուտեստ, ըմպելիք կամ աղցան պատրաստելու, հետո դրանք ընկերներին մատուցելու և միասին ճաշակելու համար: Այս դեպքում թխվածք պատրաստողը պիտի քայլ առ քայլ նկարագրի, թե ի՞նչ է անում, ինչո՞ւ է այդպես վարվում, հետո ի՞նչ է անելու: Կարելի է նաև ողջ գործընթացը կազմակերպել որպես հեռուստատեսային հաղորդում՝ այսպիսի հրահանգով՝ «Պատկերացրո՛ւ, որ քեզ նկարահանում են հեռուստատեսային հաղորդման համար»:

Կամ եթե դպրոցն ունի, ասենք, պատմության, ազգագրության թանգարան, ապա համապատասխան թեմայով դասը կարելի անցկացնել հիշյալ դասասենյակներում:

Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագրքում՝ «Ես և իմ ընտանիքը» բաժնում կան տարաբնույթ առաջադրանքներ, որոնք վերաբերում են երեխայի անձին, նրա մանկության հիշողություններին, ծնողներին, ընդհանրապես ընտանիքին (3): Դեռահասը հաճույքով պատմում է իր մասին, ներկայացնում մանկական նկարներ, հիշողություններ, որոնք լսել է մեծերից: Այսպիսի հանպատրաստից զրույցների դեռահասը հաճույքով է մասնակցում, քանի որ սա նրան հնարավորություն է տալիս խոսելու և պատմելու սեփական անձի մասին:

Այսպիսի աշխատանքի ընթացքում ուսուցիչը պիտի դրսևորի նրբանկատություն, համբերատարություն, որ բոլոր երեխաները մասնակցեն, խոսեն, պատմեն իրենց մասին: Կարելի է նաև համակարգչային ցուցադրումով ներկայացնել մանկության լուսանկարներ՝ տալով բացատրություններ և հանդես գալով բավարար հանպատրաստից խոսքով:

Սովորողների երևակայությանը հագուրդ տալու համար կարելի է ստեղծագործական աշխատանքներ կազմակերպել: Առաջարկվում է արկածային պատմություն հորինել՝

- ըստ տրված պլանի,
- ըստ տրվող տեղեկության,
- ըստ տրվող հրահանգի (պատկերացրե՛ք, որ մենք ամբողջ դասարանով ընկել ենք անմարդաբնակ կղզի, հայտնվել ենք հրթիռի մեջ և այլն),
- ըստ նկարի,
- ըստ երաժշտության,

- ըստ գրական ստեղծագործությունից ընթերցած որևէ հատվածի,
- ըստ գեղարվեստական կինոնկարի որևէ դրվագի դիտման:

Սովորողները կարող են գրավոր նշումներ անել պատմելիքի մասին, բայց ընկերների առջև հանդես գալ բանավոր խոսքով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ալեքսանյան Թ.**, Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Եր., Էդիթ պրինտ, 2012:
2. **Արմատյան Ա. և ուրիշներ**, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., ԿԱԻ, unisef, 2004:
3. **Գյուրջինյան Դ. և ուրիշներ**, Մայրենի 6, դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար, Եր., Էդիթ պրինտ, 2012:
4. **Գյուրջինյան Դ. և ուրիշներ**, Մայրենի 5-6. Ուսուցչի ձեռնարկ, Եր., Էդիթ պրինտ, 2012:
5. **Лео́нтьев А. А.**, Язык, речь, речевая деятельность, М., Просвещение, 1969.
6. **Овухова Л. Ф.**, Детская (возрастная) психология, М., РПА, 1996.
7. Педагогика, учебник, под редакцией Крившенко Л. П., М., Проспект, 2005.

РАЗВИТИЕ УСТНОЙ РЕЧИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ

Т. К. АЛЕКСАНИЯ

Работа по развитию речи учащихся средней школы (5-6 классы) имеет личностно-ориентированный характер: развитие речи сопровождается работой, направленной на раскрытие личности учащегося, его интересов и индивидуальных особенностей. Для развития устной речи предлагается применять современные технологии обучения: проблемные, модульные, интерактивные и игровые. Особо подчеркивается применение ролевых игр как средств развития навыков общения и развития устной речи учащихся.

THE DEVELOPMENT OF ORAL SPEECH IN MIDDLE SCHOOL

T. K. ALEKSANYAN

Work on the development of speech of middle school pupils (5-6 grades) has a personality-centered character: speech development is accompanied by works aimed at discovering personality, interests and characteristics of the pupil. For the development of oral speech it is suggested to apply modern teaching technologies: problem, modular, interactive and game. The use of role-playing games as a means of the development of pupils' communication skills and oral speech is especially emphasized.